ERM0622

ԱՌԱՋԻՆ
ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԳՈՐԻՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

معارف نظارت جليله‌سنك رخصتيله طبع اولنمشدر

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

1892

622

[illegible]

ԱՌ ԱՇԱԿԵՐՏՍ

Իմ փոքրիկ տղայքս, ահա ձեզի նոր գրքոյկ մը։ Այբենարանը լմնցուցիք։ Հիմա քիչ շատ կարդալ ու գրել գիտէք։ Ո՞րչափ գոհ և ուրախ էք, այնպէս չէ՞. ինչու որ աշխատեցաք, վարժապետին դասերն ուշադիր մտիկ ըրիք, հնազանդ ու կանոնապահ եղաք։ Պէտք է որ ուրեմն ընդունիք ձեր վարձքը։ Այս նոր գրքոյկը քան ամէն պարգև աւելի պատուական պիտի ըլլայ ձեզի համար եթէ հոգատանիք աւելի ուղիղ, բարձր և յստակ կարդալ և մաքուր գրել։

Բայց բաւակա՞ն է միայն կարդալ ու գրելը։ Արդեօք ուրիշ բան պէտք չէ՞։ Անշուշտ պէտք է։ Այս գրքոյկին մէջ պիտի գտնէք աղուոր զրոյցներ, վէպիկներ, ոտանաւորներ ու պատկերներ։ Տարակոյս չունիմ, որ պիտի սիրէք այս նոր դասագիրքն և երբ դասատուն գրուածները ձեզի բացատրէ, բարոյական դասեր հանէ և հարցումներ ընէ այն ժամանակ օգուտ պիտի քաղէք և աւելի գոհ պիտի ըլլաք։

Ձեր չորս կողմը կը տեսնէք քարեր, ծառեր, բոյսեր, ծաղիկներ, թռչուններ և ուրիշ շատ բաներ. ի՞նչ են ասոնք։ Օգտակա՞ր են թէ վնասակար։ Նոյնպէս ձեզի կը պատուիրեն որ միշտ խելօք, բարի, ջանասէր ըլլաք. ինչո՞ւ համար։ Այդ հարցումներուն կարճ հարեւանցի պատասխաններ պիտի գտնէք այս գրքոյկին մէջ և չգրատուածները ձեր վարժապետին պիտի հարցնէք ու պիտի միտ առնէք։

Մ։ Մ.

Թող տուէք այդ մանուկներն ու մի՛ արգիլէք,
զի այդպիսեաց է երկնից արքայութիւնը:

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

1. ԱՍՏՈՒԱԾ ՈՒ ՄԱՆԿԻԿԸ

Աստուած բարի է. մեր Հայրն է։
Նա ստեղծեց աշխարհը։
Երկիրն ու երկինքն իր գործերն են։
Աստուած ամեն տեղ է.
Ամեն բան կը տեսնէ, գիտէ, ամենակարող է։
Աստուած կը սիրէ բարի տղայքը։
Ես կ'ուզեմ բարի ըլլալ։
Ես կը սիրեմ իմ ծնողքն։

— Բա-րի. Արի. Առի. Տա-րի. Հայ. Հայր. Այր. Մայր. Եղ. Տեղ. Ցեղ։

2. ԲԱՐԻ ՏՂԱՆ

Ես առաւօտ կանուխ ելայ. հագուեցայ, երեսս լուացի.

Աղօթքս ըրի, խաչ հանեցի.



Հայելի

Աղօթեցի, որ Աստուած պահէ պահպանէ ծնողքս.

Ապա նախաճաշիկս ըրի.

Սպունգ

Առի գիրքս եւ մայրիկ-ըսի.

Սանտր

— Սիրելի մայրիկ, ես դպրոց կ'երթամ։

Մայրիկն ըսաւ, — Ապրիս զաւակս, Աստուած հետդ։

— Ա-ռա-ւօտ. Կա-նուխ. Հագ-նիլ. Հա-գուստ։

3. ԴՊՐՈՑ

Այս դպրոցը շատ աղուր է։
Ուսմունք սորվելու տեղ է։

Տղայք նստած են կարգաւ։
Աշակերտները են. վարժապետին մտիկ կ'ընեն։

Աշակերտները կը կարդան ու կը գրեն։

Ես ալ հիմա աշակերտ եմ։

Կո՞ւմ կարդաս, գրել, հաշո՞ւել սովրիլ։

Աղ. Խաղ. Թաղ. Ճաշ. Ճաշ-իկ. Նա-խա-ճաշ-իկ. Դըպ-րոց. Դը-պիր. Կարգ. Վարժ. Պետ։

4. ԱՐԵՒ

Ես արեւին հետ կ'ելնեմ.
Ի՞նչպէս կը փայլի արեւը.
Առաւօտուն կը ծագի.
Երեկոյին մարը կը մտնէ.
Կրակէ գունտի պէս կ'երեւի։

Երբոր՝ մարը մտնէ աստղերը կ'ելնեն.
Լուսին ալ կլոր է, մարդու դէմք ունի.
Լուսնին լոյսը անուշ է.
Արեգակը ցերեկուան կանթեղ է։
Լուսինը գիշերուան լապտերը է։
— Ա-րեւ. Բա-րեւ. Հետ. Նետ. Կը-լոր. Բո-լոր.

5. ԱՐԵՒ

Արեւ, արեւ, դուրս ելիր,
Քեզ պիտ' ըսենք, բարի եկիր,
Քու քուրիկդ լուսինկան,
Բերաւ չամիչ մէկ ման,
Ամպը եկաւ մութ բերաւ
Չամիչը աչքերէս կորաւ,
Բաց երեսդ արեգակ։
Ափ մը չամիչ քեզ կը տանք...
Օ՛խ, արեւին խաբեցինք
Ամպի տակէն հանեցենք։

Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆՑ

6. ԵՐԿԻՆ

Երկինքը կապոյտ է.
Երբ անձրեւ գայ կը մթննայ.

Անձրեւը կաթիլ կաթիլ կը վազէ.
Երբեմն երկինքը կ'որոտայ,
Կայծակներ ասդիս անդին կը վազվզէն.
Ինչու՞ հոսար։

— Կա-պոյտ. Պուտ. Կայ-ծակ. Կայծ. Կայծ-քար.

7. ՋՈՒՐ

Ջուրը շատ օգտակար է.
Ծարաւս կ'անցնէ.
Ջուրը գետէն կ'ելնէ.
Ջուր կը վազի երկինքէն.
Երկնէն վազած ջուրն անչքա՞ է։

— Օգ-տա-կար. Օ-գուտ. Գետ. Գէտ.

8. ԱՆՁՐԵՒ

Անձրեւ, անձրեւ ցաճ արի,
Բուսցուր ցորեն ու գարի,
Բուսցուր ճաղիկ կանաչ խոտ,
Աւլէ փոշի, մաքրէ օդ։
Անձրեւ, անձրեւ ցաճ արի,
Գալդ ամենքիս բարի։

Ա. Բ.

9. ՃԱՇ

Կէս օրին ազատ եղայ. տունն գացի. սեղանը պատրաստ էր։

Սպիտակ սփռոցին վրայ, իմ առջեւս կար պնակ մը, դըգալ մը, բաժակ մը և հաց։



Սեղան

Երբոր սեղան նստայ խաչ հանեցի, հայր Ղէր ըսի։



Հաւկիթ

Թանս կերայ, քիչ մը տաք էր. մայրիկը տուաւ ինձ խաշած հաւկիթ մը. ապա կտոր մը միս։

Խնձոր

Շատ ախորժակով կերայ. ինչու որ լաւ աշխատեր էի և դասս լաւ սորվեր էի։

Վերջը մայրիկս խնձոր մը ստացաւ և ինձի տուաւ որ ուտեմ, շատ համով էր։

— Ագատ. զատ. աղա-տիլ. զատել. ա-նա-զատ.

ԱՌԱԾ

Նաւիդ ղէկ,
Մարդուն խելք

Ոսկին աղայ,
Երկաթ ծառայ։

10. ՀԱՑ

Երբոր անօթի եմ հացը շաքարի պէս կ'ուտեմ։

Կուզեմ նաեւ գիտնալ թէ հացը ի՞նչպէս կը շինեն։

Ահա կը տեսնեմ հացն որ ունի պինդ կեղեւ և միջուկ։

Ծակուտ ու կակուղ է սպունգի պէս։

Հացը կը շինուի ալիւրէ. ալիւրը ցորենէն կ'ելնէ երբոր աղօրէպանը ցորենը կ'աղայ։ Ջրով ու քիչ մ'աղով կ'շաղեն ալիւրը, խմոր կընեն։ Ապա կը կնտեն, պնակիտի մէջ կը դնեն և կը թողուն որ խաշը (մայա) հասնի։

Վերջէն փուռը կը ղրկեն եփելու համար։

Շատ անդարար և փոքրիկ է հացը։

— Շաք-ար. քար. շահ. ծակ-ուտ. կեղեւ.

ՀԱՆԵԼՈՒԿ

Փոքրիկ կարաս ունիմ սպիտակ
Մէջի ջուրը երկու տեսակ։
Այս ի՞նչ է։

11. ԽԱՂ

Երբոր շատ աշխատիմ դպրոցը շատ եռանդով կը խաղամ։



Բաբան

Ահա երկու աշակերտներ որ բաբանի մը վրայ կ'օրուին։

Ուրիշ մը շըրջանակին հետ կը խաղայ.

Շրջանակ դարձնել

Երեք աշակերտներնալ հանգիստ նստած սանդրինշ կը խաղան։

Փոքրիկ Օհանը չը կրնար վազել. քանզի դեռ շատ պզտիկ է, անոր համար իր փայտէ ձին կը քաշէ։

— Աշ-խա-տիլ. աշ-խատ. շըր-ջան-ակ. շրջան.

12. ՀՈԳԱՍԷՐ ԱՇԱԿԵՐՏԸ

Հոգասէր է այն աշակերտն որ մաքուր կը պահէ իր գիրքն ու տետրակները։

Երբ գիր գրէ իր մատերը չը սեւ-ցըներ և իր հագուստը ու թուղթը չաղտոտեր։

Կաղամար

Կաղամարը մէկդի կը դընէ և խուփը կը գոցէ դասը պատրաստելէն ետեւ։

Զմելի

Երբոր մատիտը կըտրէ կը նայի որ մատը չը կտրէ։

Բնաւ չխաղար զմելիին հետ։

Պսակ

Հոգասէր աշակերտը ջանասէր ալ կըլլայ։ ամեն բան կարգով ու կանոնով կընէ և վերջը գովեստ ու մրցանակ կ'ընդունի։

— Հոգ-ա-սէր։ հոգ։ սէր։ տեւ-րակ։ տեւր։

ԱՌԱԾ

Ինչ որ ցանես, այն կը հնձես,
Ի՛նչ որ ընես այն կը գտնես։

13 ՄԱՐԴ

Մարդն ունի երկու աչք տեսնելու համար։

Գլուխ

Երկու ականջ լսելու համար։

Լեզու մը խօսելու համար։

Ուրեմն պարտաւոր է աւելի դիտելու մտիկ ընելէն թէ շատխօսիլ։



Բազուկներ

Մարդն ունի նաև քիթ որ հոտ, շունչ առնու։

Երկու բազուկ, երկու ձեռք եւ տասը մատ ունի, որպէս զի աշխատի ու տատի։

Երկու ձեռք

Ունի նաև երկու սրունք և ոտք՝ որ տեղէ տեղ շարժի։

Ոտք

Եթէ զգայարանք չունենար պիտի կրնա՞ր զգալ, խորհել։ Երկրիս վրայ ամեն արարած զգայարանք ունի՞։

— Հա–մար. ամար. ա–մառ. յամառ. յա–մայր.

Փետուր գրչի համար գրչակալ պէտք չէ։

Երկաթէ գրչին համար գրչակալ կը գործածեն։ Աւելի շատ կը դիմանայ։

Գրչակալը կրնայ ըլլալ փայտէ, կիտոսկրէ, գաղտակուրէ, թիթեղէ։

— Բըն-ա-կան · բըն-ու-թիւն · բուն · բըն-իկ · բըն-ակ։

17 · ԳԱՍ

Երբոր երեկոյին դպրոցէն կ'արձակուիմ՝ ճամբան խելօք կը քալէի և շիտակ տուն կ'երթամ։ Երբոր տեսնեմ ազգական, բարեկամ և մեր տան ծանօթ մարդ և վարժապետ՝ գլխարկս կը հանեմ ու բարև կուտամ։

Ընթրիքս ընելէն ետեւ քիչ մը կը նստիմ ծնողքիս քով, և ապա կը քաշուիմ սենեակս և միւս օրուան դասերս կը սերտեմ։ Այսպէս մէկ երկու ժամ կ'աշխատիմ և վերջը կ'երթամ անկողինս · Տէրունական աղօթքը կ'ըսեմ և կը պառկիմ, որ առաւօտ կանուխ ելնելով դպրոց երթամ։

— Քալ-եմ. քայլ· գայլ·

18. ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցի կամք քո, որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք

թողուսք մերոց պարտապանաց. եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն։

Անուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ամէն։

ՁԹ. ԱՍՏՈՒԱԾ

Ո՞վ խրատեց մրջիւնին
Գետինը ծակել,
Բոլոր ամառ մեծ ջանքով
Պաշար հաւաքել։

—

Որմէ՞ ուսաւ, ինձ ըսէ՛ք.
Փոքրիկ թռչունը,
Յարդէ, ճիւղէ և բրդէ,
Հիւսել իր բոյնը։

—

Ո՞վ խրատեց մեղուին,
Հրաշալի բանիւ,
Ծաղկանց մեղր քաղել,
Անուշ և ազնիւ։

Աստուած է այդ վարժապետ,
Բարի անսահման։
Ջանացէ՛ք միշտ կատարել
Նորա սուրբ հրաման։

ՄԱՍ Բ.

1. ԾՆՈՂԱՍԷՐ ՏՂԱՆ

Արեւը նոր ելաւ. առաւօտուն կը փայլի ցօղը ծաղիկներուն վրայ։

Փոքրիկ Վահէն ոտքի վրայ է արդէն։ Իր ձեռքն ունի ցնցուղ մը։

Հոգասէր Տղան

Ինչո՞ւ այսպէս կանուխ կ'աշխատի.— Ինչու որ իր հայրն՝ որ պարտիզպան է, չկրնար աշխատիլ. ոտքը ցաւցուց հողը հերկելու ատեն։

Վահէն իր հօրը գործը կ'ընէ,

դպրոց չգացած ածուները կը ջրէ։

Իր հայրը նստած է քարի մը վրայ, գորոշվալի աչքով կը նայի իր աշխատասէր զաւակին։

Ցնցուղ

Վահէն շատ գոհ է, ինչո՞ւ որ էրդ՞ով ցոյց կո՞ղայ էր ուրը հոգը համար։

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.— Փայլիլ. Փոքր-փոքրիկ Պարտէզ-պան. Ծաղիկ-ներ. Լայն։

ԳԻՏԵԼԻՔ. — Արեւն ի՞նչպէս կ'ելնէ. Ի՞նչ է ցող. Ածու. Հատոց. Բահ. Տրմուխ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ.—Սէր որդիական. պարտաւորութիւն։

2, ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ԸՍԷ

Մարտիկին մայրը կտոր մը բլիթ տուաւ իրեն։ Մարտիկ մոռցաւ ըսելու. — Շնորհակալ եմ, մայրիկ։

Մայրիկը ցաւեցաւ, բլիթն առաւ տղուն ձեռքէն եւ կատուն կանչեց։

Կատուիկին տուաւ կտոր մը բլիթ, փիսիկը շատ գոհ եղաւ, գըգ-

ուեց տանտիկինը, միաու միաու կ'ընէր։

— Տե՛ս, ըսաւ մայրիկը որդիին, փիսիկը լեզու չունի, բայց իր կերպովը շնորհակալ եմ կ'ըսէ։

Վերջը մայրիկը կանչեց շունն եւ բլիթին մնացած կտորն անոր տուաւ։

Շունն սկսաւ պոչն օրել, և շնորհապարտ դէմքով անոր ձեռքը լզեց։

Շունն ալ գիտեր իր կերպով շնորհակալ լինիլ։

Միւս կողմէն Մարտիկ երեսը կախած կը նայէր որ բլիթը մէջ կը խաղայ եւ մտքով կ'ըսէր,

Մայրիկը իրաւունք ունի. ինչ որ ուրիշանի չե՛ք ուզեր ընդունելու այն որ չգիտեր ընդհակառակ լինիլ։

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Տուաւ-տալ. Մայր-մայրիկ. Իմ. Ձեռք-ձեռքէն։

ԳԻՏԵԼԻՔ. — Կատու. Զորքոտանի. Եւայլն. Տուն. Տնակ. Ապարան։

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Քաղաքավարութիւն եւ երախտագիտութիւն։

3. ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Ուղտ

Այծ

Էշ

Կենդանիները կան որ ընտանի են, մարդու հետ կը բնակին, անոր կը ծառայեն եւ տնուն կուտան։

Վագր

Առիւծ

Կան կենդանիներ ալ որ վայրենի են, լեռներն ու անտառները կը բնակին։

4. ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Կառք քաշող ձի

Ձին շատ օգտակար կենդանի է։ Ձին կը կրէ մեր բեռերը. կը տանի մեզ տեղէ տեղ։ Շատ անգամ արօրը կը քաշէ, կովուն պէս, եւ կառքի կը լծուի։

Շուն

Կատու

Կովն, ոչխարն ու այծը մեզի կուտան կաթ։ Կաթէն ի՞նչ կը շինուի։

Շունը մարդուն բարեկամն է. տունը կը պահէ, կը պահպանէ։ Հովիւին ոչխարներուն վրայ կը հսկէ որ գայլը չ'առնէ չը տանի։

Կատուն մուկ կը բռնէ։

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Ընտանի կենդանի. Լեռն. իր. Շինել, Շինուիլ. Շէն. Անշէն եւայլն։

ԳԻՏԵԼԻՔ. — Ո՞ւր կը բնակին մարդիկ...

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — *Ընտանի կենդանիներու վրաս չընել. ինչո՞ւ։*

5. ՊԱՐՏ

Երեք մանկիկներ՝ ուրախ ու զուարթ,
Կ'երթային դպրոց խօսելով հանդարտ.
— Թէ լաւ աշխատիմ, կ'ըսէր մին միւսին,
Հօրս խոստացածն՝ կ'ընդունիմ ոսկին։
Երկրորդը յարեց, Թէ ես աշխատիմ,
Իմ սիրուն մօրմէս, մի համբոյր կ'առնեմ։
— Իսկ ես ի՞նչ ընեմ, հառաչեց վերջին,
Հայր ու մայր չունիմ։ որքի՞ն՝ ի՞նչ բաժին։
Բայց եւ այնպէս ես, միշտ պարտ կատարեմ,
Պարտ կատարելով՝ վարձք հետը կ'առնեմ։

ՀԱՆԵԼՈՒԿ

Ցուշիկ յուշիկ կը քալէ
Գիշեր ցորեկ, փոյթը չէ,
Թէ եւ նոյն տեղ միշտ մանգայ
Բայց իւր գլուխ ո՛չ դառնայ.
Ո՛չ քալելէն կը յոգնի,
Ոչ կերակրոյ պէտք ունի,
Բայց ինքն է որ քեզ կ'ըսէ,
Ե՛լ, կեր, աշխատէ՛ եւ քնէ՛։

8. ԵՐԿՈՒ ՔՈՅՐԵՐ

Մայրիկն ըսաւ Մարթային.

—Աղջիկս, նստի՛ր և սա կողովին մէջ գտնուած ոլոռներն սարկէ։

Մարթա գործի սկսաւ. բայց այն-

քան մեծ կ'երեւէր իրեն կողովը, որ կարծէր թէ չպիտի լմննայ։

Իր քոյրը Երանիկ շուտ մը քովը վազեց և ըսաւ.

— Քուրիկ, թո՛ղ որ քեզի քիչ մ'օգնեմ։

Քուրիկը կ'օգնէ

Քուրիկը սկսաւ շուտ շուտ ստրկել։ Իր փոքրիկ մատերովը կը բանար փոճոկները, կը հանէր ոլոռները և մեծ պնակի մը մէջ կը նետէր։ Երկու քոյրերու մէջ մրցում մ'ընկաւ իրարմէ աւելի շատ ընելու։ Երկուքն ալ զարմացան երբ յանկարծ տեսան որ կողովը պարպուեր է։ Ուստի ուրախ զուարթ ելան եւ գացին միասին խաղալու։

Ոլոռն

Կողովը պարպուեր է։

Երբ աշխատանքը քաջալերուի հաճելի կը լինի։

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Սա. Դա. Նա... Ը. Ն. Լայն։

ԳԻՏԵԼԻՔ. — Աչխատութիւնը երբ բաժնուի շուտ կ'լմննայ. Օրինակ մը։

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Իրերօգնութիւն։

Արջ Կապիկ

18. ՎԱՅՐԵՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Առիւծը կենդանիներուն թագաւորն է։ Շատ ուժեղ է. ունի խիտ բաշ մը եւ երկայն պոչ։

Աղուէսը հաւերուն թշնամին է. Գայլը ոչխարներուն անգութ ոսոխն է։ Գառնուկներ եւ մաքիներ կը յաւիրշտակէ և անտառը տանելով կը պատառէ, կ'ուտէ։

Արջ տեսա՞ծ ես։ Կապիկը խաղաղասէր միմոս մ'է։

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Ոյժ, ուժեղ. Բաշ, ինչպէ՞ս բաշ. Անգութ, գթոտ եայլն։

ԳԻՏԵԼԻՔ. — *Կենդանիներու տեսակներ. Օդի, ջրի, ցամաքի և այլն։*

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — *Յափշտակիչ մարդիկ ատելի, ինչպէս կենդանիները։*

11. ԳԱՌՆՈՒԿ

« Ինչո՞ւ կուլաս, դու գառնուկ, »
— Խիստ ծեծ կերայ ես, մայրիկ.
« Ո՛վ ծեծեց քեզ, իմ գառնուկ.»
—Մէկ ծեր պառաւ, վատ կնիկ.
« Ինչո՞ւ ծեծեց քեզ գառնուկ.»
— Ծառի տակն էի, մայրիկ,
« Ո՞ր տեղիդ խփեց, գառնուկ.»
— Ոտիկներիս, իմ մայրիկ.
« Ինչպէս լացիր, դու գառնուկ.»
— Մէ՛, մէ՛, մէ՛, մէ՛, իմ մայրիկ։

Ա. Բ.

12. ՔԱՂԱՔԱՎԱՐ ԵՂԻՔ

Երեք տղաքներ պատի մը տակ նստած կը խաղային։

Պառաւ կին մ'այն կողմէն կ'անցնէր, ծանր ծանր կը քալէր և նոյն պատին կը կռթնէր։

Երեք տղաքները շուտ մ'ոտք ելան և մէկդի քաշուեցան որ պառաւ կինն անարգել ճամբան շարունակէ։

Երբ պառաւը մօտեցաւ, տղեկները իրենց գլխարկները հանեցին, բարեւ ըսելով։

Եթէ տղայք կ'ուզեն սիրելի լինիլ, պարտաւոր են թէ դպրոցը, թէ տունը, եւ ամեն տեղ յարգանօք շարժիլ եւ վարուիլ մեծերուն առջեւ։

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Երեք. Թուական. Երրորդ Նըստիմ. Եայլն. Խաղասէր. Արգել. ան-արգել։

ԳԻՏԵԼԻՔ. — Տարիք. Տղայ, պատանեակ, երիտասարդ. արբուն,

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Բաւական չէ կիրթ լինիլ, այլ եւ քաղաքավար, պատճա՞ռ։

ՀԱՆԵԼՈՒԿ

Կը խօսի մարդ չէ,
Կը մլաւէ, կատու չէ,
Ուրիշ կենդանի ալ չէ,
Հապա մտածէ՛ այդ ի՞նչ է։

13· ԼՈՒՍՆԱԿ

Լուսնակ կուզեմ ես լուսնիկը,
Պոռար լալով պղտի Լուսիկը,
Ոտքը դեռին դաք դաք զարնէր,
Որ խօսքն ընէ իր մայրիկը·
— Մի՛ լար, հոգի, էհ, լուռ, մի՛ լար։
Մայրիկը կ'ըսէր դողահար։ —
Եւ ճար ու ճարակ կը փնտռէր,
Որ լուսնակն հուպ առնէ վար։—
Անդին մամիկն ալ շուարած,
Գլուխն առաւ դուրս դնաց,
Շուկաները ընկաւ որ դնէ,
Լուսնակները, որպէս պանիր հաց։
Վլվլուկն որ հայրիկն լսեց,
« Ի՞նչ կայ հոդ տեղ, ի՞նչ կայ, գոչեց,
« Եկ աղջիկ դու, ես տամ ուզածդ»
Ըսաւ նա, եւ անոր ժպտեց։
« Ելի՛ր շո՛ւտ, սա մօտ լեռն ելի՛ր,
« Ինձի հետ շատ շուտ վազիր·
« Լուսնակին որ կը մօտենանք,

«Անոր պոչէն պինդ պինդ բռնի՛ր։»
Փոքրիկ աղջիկն ուժովը բոլոր,
Կը վազվզէր ոլոր մոլոր,
Իսկ երբ հասան բլրակն ի վեր.
— Հայր, այդ լուսնակ հեռի՞ է դեռ.
«Աղջիկ դու միշտ, արի՛ քալէ,
— Բայց կը հեւամ, ալ հերիք է։
«Մի թէ հովդ անցա՞ւ աղջիկ.
«Զեռ խօսիր դու ինչ եղեր է։
Լուսիկ տրտում, յոգնած կարմրուն,
Ձայն չը հանեց դարձաւ ի տուն,
Բայց սրտին խորը ոխ քէն պահեց,
Լուսնակին դէմ, որ կար հեռուն։

Անկարելին միշտ կը փնտռեն.
Այն մարդիկ ոչ ցնորքեր են։

---

14. ՕԳՆԵՆՔ ԻՐԱՐՈՒ

Ագարակ մը կար որու մէջէն գետ մը կ'անցնէր։ Այնքան շատ անձրեւ եկեր էր որ գետը յորդեր էր։

Փոքրիկ Օհան, ագարակապանին որդին, գետին առջեւ կը գտնուի։ Եւ կանգ կ'առնէ։

Օհան շատ կը վախնայ եւ տուն երթալու միջոցը կը փնտռէ։ Նոյն միջոցին՝ Օհանին մէկ ընկերն անկից կ'անցնի։ Աւելի մեծ եւ ուժեղ էր։ Օհանը կ'առնէ իւր կռնակը եւ կ'անցնի դիմացի եզերը, երբոր գետը կը գոռար։

Զոփահաս տղայ պարտէն օգնել իրենց փոքրիկ ընկերներուն։

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Օհան ի՞նչ անուն է. Գետ. գետակ եայլն։

ԳԻՏԵԼԻՔ. — Գետն ի՞նչ է. Աղբիւր. Ծով. եայլն։

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Ամենէ փոքրը մեծին կրնայ օգտակար լինել։ Օրինակ,

15. ԱՆՀՆԱԶԱՆԴ ՏՂՈՒՆ ՊԱՏԻԺԸ

Պաղտիկ ամեն օր դպրոց երթալու ատեն քարաշէն կամրջէ մը կ'անցնէր։ Մայրիկն անոր կ'ըսէր միշտ. — Տը-

դաս, կամրջին որմէն վար մի՛ ծռիր, գետին մէջ կ'ինկնաս։

Բայց Պաղտիկ շատ կը փափաքէր պատին վրայէն գետը նայիլ, և կ'ըսէր. — Կարելի է ջրին մէջ ձկները կը տեսնեմ։

Օր մը Պաղտիկ ելաւ քարակոյտի մը վրայ, երկնցաւ եւ սկսաւ նայիլ։

Բան մը չտեսաւ, այլ ոտքը սահելով՝ գետին մէջ ինկաւ։

Քանի մը մարդիկ շուտ մը վազեցին և գետէն հանեցին Պաղտիկը. մարած էր. կիսամեռ էր. ճակատը քարի մը զարնուելով ծակած էր։

Այսպէս խեղճ Պաղտիկ իր պատիժը գտաւ և այնուհետեւ միտքը դրաւ մօրը պատուէրը պահել։

ՔԵՐ. ՎԱՐԺ. — կամուրջ — կամրջի. Անոր. Այն. Նա. կիսամեռ։

ԳԻՏԵԼԻՔ. — կամուրջ. Որմ. Քիւ. Պատ. Ձուկ. Լուղակ. ԲԱՐՈՅ. հնազանդութիւն.

17. ՋՈՒՐ

Ջուրը շատ օգտակար հեղուկ է։ Ծարաւ կ'անցնէ. կը մաքրէ, երկիրը կ'արգասաւորէ. կրակը կը մարէ. աղբի կը դարձնէ։



Ծով եւ Նաւ

Ջուրն այլ եւ այլ վիճակ կրնայ ունենալ. կրնայ լինիլ ամպ, անձրեւ. ձիւն, կարկուտ, սառոյց, շոգի, ցօղ։

Ջրերը երբոր հաւաքուին կը կազմեն աղբիւր, առու, գետ, լիճ, ծով, ովկեան։

Ծովու վրայ կան նաւակներ, նաւեր։

Երկրի չորս մասին երեք մասը ջուր է։



Կամուրջ

Գետին մէկ ափէն միւս ափը կամուրջ մը կը տեսնեմ։

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Կրակ — Կրակոտ. Ծով. — Ծովու (հոլովո՞ւմ) ի — ու — եան — ուան. Ծովու. Նեղութեան. Ձմերուան։

ԳԻՏԵԼԻՔ. — Ջուրն ի՞նչպէս կարկուտ, չոգի կը լինի. Ծովու վրայ կեցող և չկեցող մարմիններ. պատճա՞ռ։

ԱՌԱԾ

Օձը ծաղկէն թոյն կը չինէ, մեղուն մեղր.
Ծաղկի պէս հոտով եղիր, մեղրի պէս համով.
Հաւն անգամ որ ջուր խմէ, վեր կը նայի։

17· ԵՐԿՈՒ ԱՅԾԵՐ

Գոռոզ մի այծիկ,
Ի կամուրջ պզտիկ,
Գտաւ դէմ առ դէմ
Նոր այծ խստադէմ։
«Շուտ քաշուէ դու ետ,
Խենդուկ, վատ, տգէտ։»
— Չեմ ես ետ քաշուիր.
Ապուշ դիմադիր։

Եւ շուտ եղջիւրներ
Կըսկսին վար վեր
Զարնել հրմշակել։
Այսպէս երկուքն ալ,
Գլորին խակոյն,
Կ'ըլլան գետամոյն։
Կան շատ խենդուկներ
Որ չեն վարուիր տարբեր
Քան այս այծուկներ.

18. ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔ

Երբ Ղուկաս առաջին անգամ դպրոց գնաց սիրտը սաստիկ կը զարնէր։

Մանաւանդ երբ տեսաւ որ սրահին մէջ շատ աշակերտներ կան,



Դպրոց

պատերուն վրայ աշխարհացոյցներ և պատկերներ կախուած կան, այնչափ չփոթեցաւ որ կարծեց թէ ամէն բան իր չորս կողմը կը դառնար։

Բայց տեսաւ աշակերտներուն մէջ մանկիկներ որ իրմէ փոքր էին և ե. ռանդով ուսմանց կ'աշխատէին։ Այս տեսնելով սիրտ առաւ և մտքովը ը. սաւ. — Է՛հ, ես ալ կրնամ աշխատիլ։

Երբ դասը լմնցաւ, վարժապետը գնաց ա. նոր մօտ և ըսաւ ժըպ. տելով։

— Տղաս, թէ որ այդպէս անդուլ աշխատիս, շատ լաւ բաներ պիտի սորվիս և ծնողացդ ու. րախութիւն և պատիւ պիտի բերես։

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Աշակերտ. Աշակերտութիւն. Աշակերտաց- (հոլովում) Ուսում. ուսման. Եկեղեցի- ցւոյ. Իտալիա - իոյ. Հայր - հօր և այլն։

ԳԻՏԵԼԻՔ. — Ի՞նչ է դպրոցը։

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Աշխատութիւն. բարի նախանձ։

---

11. ՓՈՔՐԻԿ ՄՐՋԻՒՆԸ

Տեսայ փոքրիկ մրջիւն մը, ա. դին անդին կը վազվզէր որ ուտելիք փնտռէ։

Ճամբուն վրայ գարի մը գտաւ.

ուզեց առնել տանիլ. բայց ի՞նչպէս. գարին մեծկակ էր. ինքը փոքր ու տկար։

Այն ատեն հնար մը գտաւ. քարի մը վրայ ելաւ և սկսաւ վերէն նայիլ, ինչպէս բարձր աշտարակէ մը.

Ասդին կը նայի, անդին կը նայի, և վերջապէս կը տեսնէ երկու ընկեր որ անկից կ'անցնէին։ Շուտ մը անոնց մօտ կը վազէ, քիթն անոնց քթին կը քսէ ըսելու համար։

Եկէք, շուտ, ինձի հետ եկէք, վարն աղուոր կրծօն կայ։ Երեք մրջիւններն կը վազեն և գարին մէկտեղ կը տանին։

Ինչ որ մէկը չէր կրնար ընել միւնակը, երեքը միասին շատ դիւրաւ կը կատարեն, և առօք փառօք կը տանին գարին որ իրենց համար շատ թեթև էր հիմա։

Տղայ՝ պաս առէ՝ այդ աշխատասէր մրջիւններէն։

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Ընկեր (պարզ անուն) Դասընկեր (բարդ անուն)։ Անուան մի քանի ձեւերը բացատրել։

ԳԻՏԵԼԻՔ. — Մրջիւն (միջատներու վրայ կարճ տեղեկութիւն)։

20. ՊԶՏԻԿ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Ճանճը ճճի (միջատ)մ'է։ Մեղուն մեղրատու ճանճ մ'է։ Հաւատալի՞ է։ Սիրուն, գոյնզգոյն թիթեռնիկները ժամանակ մը թրթուրներ էին։



Մամուկ եւ ոստայն

Կան թրթուրներ որ մետաքս կը մանեն։ Ասոնք են շերամները։

Սարդն (մամուկ) ալ կը մանէ. բայց իր ոստայնը գարան մ'է զոր կը լարէ ճանճերուն։ Անխոհեմ ճանճերը շատ անգամ կը բռնուին։

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Սէր-սիրուն. Որ-որու-որմէ. որով-որոնք եւ այլն։

ԳԻՏԵԼԻՔ. — Օգտակար միջատներ։

ՀԱՆԵԼՈՒԿ

Ջրի մէջ գիրար կը նային երկու եղբայր,
Բայց դարերով իրարու չեն մօտենար։

—

Կ'երթայ ու կ'երթայ հետքը չկայ,
Կը կարէ ու կը կարէ արիւն չկայ։

21. ԱՄԷՆ ԷՍԱՐԻ ԸԼԼԱԼ ՔԱՆ ԳԵՂԵՑԻԿ

Երկու քոյրեր կային, մէկին անունն էր Ֆուլիկ, միւսինն էր Երմանիկ։ Ֆուլիկ սիրուն աղջիկ մըն էր, այնպէս որ տեսնողը անոր վրայ կ'զմայլէր և զանի կը գգուէր։ Իսկ Երմանիկ աղուոր չէր, ուստի

շատ ախուր էր։ Երբ օր մը հայելիին նայեցաւ, շատ աւելի տրտմեցաւ. բայց քիչ մը մտածեց և ըսաւ։

— Ես գեղեցիկ չեմ. ինչ փոյթ. կ'ուզեմ բարի ըլլալ, այնչափ բարի որ

ամէն մարդ սիրէ զիս, իմ տգեղութեանս չնայելով։

Եւ Երմոնիկ ամենուն հետ սիրով կը վարուէր, բարիք կընէր, այնպէս որ ամէն մարդ կը սիրէր զինք։

Իրաւ, իր բարութեամբը դէմքն ալ աւելի սիրուն եղաւ քան ամենէ աղուորին կերպարանը. վասն զի բարի սիրտ ու անուշ լեզու ունեցողն կ'աղուորնայ։

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Աղու. Աղուոր. (Ածանց մասնիկը) աւոր, ային, ական, աւէտ, եղէն, եայ, ոց, որդ, ցի, ցու և այլն։

ԳԻՏԵԼԻՔ. —Հայելին ինչպէս կը չինեն. Ուրիշ ապակեայ առարկայք։

ԲԱՐՈՅ. — Համեստութիւն,

22. ԹԻԹԵՌՆԻԿ ԵՒ ՄԵՂՈՒ

Թիթեռնիկն կ'ըսէր մեղուին,
Թեւերը բաց եւ ցնծագին,
— Թէ օդն լինի անուշ պայծառ,
Շուտ շուտ տ'երթամ խաղալ անտառ։
« Չէ, չէ, կ'ըսէր, խելօք մեղուն,
Զեմ սիրեր ես ցնալ օրն ի բուն
Թոյլ ու անհոգ եւ երերուն։
Այլ փեթակիս գործը կայտառ
Տ'երթամ շինել սիրողաբար,
Թէ օդն լինի անուշ, պայծառ։ »

23. ԱՄԱՆՆԵՐ

Շիշ

Գաւաթ

Տակառ

Մայրիկն ի՞նչ ամանի մէջ կը պահէ ջուրը։ Կոյժի մէջ։ Ի՞նչ է այն ջրով լեցուն ամանն որ սեղանին վրայ դրուած է։ — Շիշ։

Ի՞նչ կը գործածես ջուր խմելու համար. — Ոտնաւոր կամ անոտն բաժակներ։

Ի՞նչ բանի մէջ կը պահեն գինին. — Տակառի մէջ, շիշի մէջ։

24. ԳՏՆՈՒԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Ուրախ զուարթ ցատկրտելով Գրիգոր կ'երթայ տուն։

Իր ոտքը յանկարծ բանի մը զարկաւ։ Գրիգոր ծռելով նշմարեց արծաթ հինգնոց մը, որ նոր էր և փոշիին մէջ կը փայլփլէր։

—Ի՞նչ ուրախութիւն, ըսաւ։ Այս դրամով շաքար պիտի գնեմ եթէ մայրիկս հրաման տայ։

Բայց Գրիգոր քիչ մը մտածեց և ինքնիրեն ըսաւ։

—Բայց այս ստակը իմս չէ։ Քիչ մ'առաջ տեսայ Աննիկն որ իր հիւանդ մօրը համար երկու դահեկանի կաթ առնելու կ'երթար։ Անշուշտ այդ ստակն այն [illegible]ուցած պիտի լինի։

Եւ բարեսիրտ Գրիգոր վազեց դէպ ի Աննիկը։ Խեղճ Աննիկ կուլար ինչու որ ստակը կորուսեր էր եւ մայրը շատ աղքատ էր։

Մի՛ լար, պոռաց Գրիգոր։ Ես գտայ ստակդ, ահա՛ առ նայիմ։

Աննիկ թէ կուլար և թէ կը խնդար իր ստակը գտնելուն համար։ Շատ շնորհակալ եղաւ Գրիգորին և

գրամն առնելով վազեց որ իր մօրը կամար գնէ։

Գրիգոր աւելի երջանիկ էր քան Անդիկը, ինչու որ շատ անուշ բան է պարտք կատարելը։

ՔԵՐ. ՎԱՐԺ. Ուրախ (ներկայն) Տրտում Նոր. Հին. Անուշ, Դառն. Ստակ (հոմանիշ) Դրամ. Աղքատ, Տնանկ։

ԳԻՏԵԼԻՔ. — Արծաթն ի՞նչ է (ծանօթ. մետաղներու վրայ)։ Շաքարն ի՞նչպէս կը չինուի։

ՀԱՆԵԼՈՒԿ

Ապա ասէք ի՞նչ է,
Որ չպտըտած իւր վրայ՝
Կառքն առաջ չի գնայ։

24. ԿԱՒԻՃ

Կաւիճը սպիտակ է. տեսակ մը կիր է։ Քարտախի մէջ կ'ելնի, կ'ելնայ. կարծր է ու շատ, շուտով կը փչրուի։

Անոնց տախտակին վրայ կուխճով կը գրեմ վարժապետին լսած խօսքերը։

25. ԿՌԻՒ ԵՐԿՈՒ ՓՈՍՐԵՐՈՒ ՄԷՋ

Եղինէ ու Քրիստինէ ապուր դեղէն մը ուներին։ Այրդ ապցին շրջապը եան ուներ այդ պէպէկն և երկու քոյր փոխոխակի կ'առնէին զայն իր ենցիմեւ ևերուն մէջ և պտոյտի կը տանէին։

Օր մը Քրիստինէ ուզեց որ ինք մի-

այն առնէ պէպէկը Եղինէ զէմ կեցաւ և ապուր վրայ կոխուն սկսաւ։ Մէկը ուժով բռնեց միւսն պէպէկին գլխէն, միւսը քաշեց ոտքէն։

Խեղճ պէպէկին ի՞նչ եղաւ, երկու կտոր եղաւ. և երկու քուրիկներն կռնակի վրայ վար ընկան։ Մէկուն ձեռքը մնաց պէպէ-

26. ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

Անտոնիկ ունէր փառաւոր թռուցիկ մը, կարմիր պոչով և երկայն առաստանով։



Մարտ ամսուն առաւօտ մը՝ օդը չատ ապր էր. թեւեւ հով մը սկսեր էր փչել։ Անտոնիկին ընկերները իրեն կ՚ըսէին վազելու։

Անտոնիկ առաւ թռուցիկն, բայց տեսաւ որ թռուցիկին պոչն առաստանին խառնուեր էր. ուզեց զատել, բայց չկրցաւ։

Անտոնիկ բարկութիւն էր։ Կը ջանայ քակել կապերն անդամալեր եւ թեւամբ. կը պոռայ. կը կանչէ, ապրը գետինը կը զարնէ։

Վերջին ուժով կը քաշէ առասանն և ՝ՇԷ՝ ՇԷ՝ լիռուցիկը երկու կողմ կ՚ելլայ։

— Վար իջի՛ր, Անատոլիկ, կը գոչէին իր ընկերները փոգոցէն։ Հովը կամաց կամաց կ՚սաստկանայ։

Բայց, ափսո՛ս, երբ Անատոլիկ վար իջաւ, ձեռքը քաշուած էր շատ ոգորմելի դէմքով մը իր լիռուցիկին բեկորները։

Ի զուր հովը փչեցնողն օրն և միւս օրերը։ Անատոլիկ մնաց տունը տրտում ախուր, և մտածեց լալ՝ ինչո՞ւ բան է բուկ-ռիթ-ը։

ՔԱՐ. ՎԱՐԺ. — Իր. Իրենց (դէմք) Իմ. Քու. Մեր. Ձեր. Իրենց ելն։

ԳԻՏԵԼԻՔ. — Մարտ. (տարուան ամիսները)։ Ի՞նչպէս կը շինուի թռուցիկը։

ԲԱՐՈՅ. — Համբերութիւն և քաղցրութիւն։

ԻՄ ՄԱՆԿԻԿՍ

Իմ մանկիկս գեղեցիկ է
Երբ որ կ'ելնէ օրրանէն։
Զայն չի հաներ ու կը ձգէ
Որ զինքը հագուեցընեն։

Իմ մանկիկս գեղեցիկ է
Երբ որ ամիսուն վրայ
Փափուկ ոտիւրը կը կայնի
Եւ Աստուծոյ փառք կուտայ։

Իմ մանկիկս գեղեցիկ է
Այո՛, և շատ գեղեցիկ.
Եւ իր մայրը ինքզինքը
Անով կ'ըղձայ երջանիկ։

---

28. ԻՆՔՆԱՍԷՐ

Զարեհ պատկերասաղարդ գիրք մ'ըն. գուռնած էր՝ իր եւ պարգեւ։ Իր Յովսէփ ընկերը խնդրեց որ այդ գիրքը տեսնէ։

Բայց Զարեհ գիրքը գոցեց ու գնաց ըսելով։

— Ես գիրքս ուրիշի չեմ տար.

Բանի մ'օրէ վերջը՝ Յովսէփին կնքահայրը գոնաւոր գնդակ մը տուաւ իրեն, գեղին, կոպտոտ և կարմիր շերտեր ունէր։

Յովսէփ շատ ուրախ էր. իր ընկերները կանչեց և սկսաւ անոնց հետ

խաղալ։ Գնդակը ձեռքէ ձեռք կ'անցնէր ոստոստելով։

Զարմհ ալվադոյ որ անոնց հետ խաղար Այն ատեն Յովսէփ ըսաւ անոր.

— Ես ալ կրնայի քեզի պէս պատոխանել. "Փոխ չեմ տար իմ գլն.

գակ »։ Բայց այս մերժումն քեզի վիշտ պիտի պատճառէր, և ես չեմ ուզեր որ վշտանաս։ Եկուր մեզի հետ խաղայ։

Մէ՛ լինէր եսաւէր. եսաւէրն ամէն բան իրեն համար կը պահէ և էր ընկերները կը զրկէ։

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Ընդունած – Ընդուներ (անցեալ) Գէս Իրրեւ– (նախադրութիւն կամ յետադրութիւն) Առանց. Վրայ. Հետ. և ն։

ԳԻՏԵԼԻՔ. — Գնդակ. Ի՞նչու համար թնթեւ է։ (Օդապարիկ)։

ԲԱՐՈՅ. — Ի՞նչ է ինքնասիրութիւն։ Ուրիշի բարիք ընելու պարտաւորութիւն։

29. ՆՍՏԱՐԱՆ

Այս նստարանն որու վրայ նստած եմ, մեկ քանի գործաւորներ շինած են։

Փայտահատը կացնին կտրած է անտառէն իր կայենովը։

Սլոյլին վուտերը առած և աստղձներ շինած։

Ատաղձագործը տաշած է տոմս ատաղձն իր քերիչով։

Ներկարարն անոր գոյն տուած է։

ԳԵՐ. ՎԱՐԺ. — Նստարան – նիստ. վարժ – արան. Սղոցիչ։ քարոզ – իչ. ոզ – չէն – գործ – բար։

ՔԻՏԼԻՔ. — կացին. ի՞նչ գործիք է. Ուրիշ ի՞նչ գործիներ ունի ատաղձագործը. Հի՞սան։

30. ՀԱԿԱՌԱԿԱՍԷՐԸ

Բարկէն շատ կ'խուսափէր ուրիշին դպչիլ ու կռուիլ։ Առաւօտ մ'իր դասարանին մէջ՝ երբ իր Օգնիկ դասընկերը երես մը գիրկը դրեր ուշադիր, անոր Թեւը հրեց յանկարծ և մեքանը կամիլ մ'ընկաւ գեղագրուիլեան տետրակին վրայ։

Օնիկ բարի սիրտ ունէր ձայն չհանեց. վարժապետին չգիտցաւ պանպատ չրրաւ, որպէս զի իր դասընկերը չը պատժուի, այլ

նորէն սկսաւ նոր երգեր մը դրել։

Երբ դպրոցէն ազատ եղան, Բարկէն քաղքին հրապարակը գնաց և տեսաւ որ Օնիկ ամէն քանի լնկերներով գնդիկի խաղ կը խաղար։ Զարմանքի տղան ոտքի հարուած մը տալով բոլոր գնդիկները ցիր ու ցան ըրաւ և խնդալով կծիկը դրաւ։

Այսպէս կէս ժամու մէջ երկու՞ շաբաթ լմիւն ըրաւ Բարկէն և կը կարծէր լմէ ըրածը մեծ յանդգնութիւն է։

Նոյն միջոցին Բարկէն տեսաւ մսավաճառի մը խոշոր շունն որ ոլորուած կը քնանար հանդիստ՝ արեւին մէջ։ Կամաց կամաց մօտեցաւ շան, և անոր պոչէն քաշելէն ետեւ՝ նետի պէս փախաւ։

Բայց քիչ մը հեռացեր էր Բարկէն երբ զդայուր ակռաներ որ սըրունքին վրան մէջ կը մտնէին։

Բարկէն սկսաւ բոլոր ուժովը պոռալ և շարժիլ, բայց որչափ շարժէր

այնչափ շան ակռաներն իր միսին մէջ կը մտնէին։

Ո՞վ լսեց ամենէ առաջ Բարկէնին փոյթասու�ը։ Նոյն ինքն Օնիկ լսեց։ Արիարար վազեցաւ վրայ և վառնոն աչքն առնելով յաջողեցաւ շուն վոնտել։

Ապա տուն մտաւ Բարկէնը՝ որ կը կաղար։ Այսպէս Բարկէն գոյի դաս մը առած էր իր շարուխեանը համար, և իր դասընկերէն նեղուած կը խնդրէր։

Այն ժամանակէն՝ այդ երկու տղայք լաւ բարեկամ եղան։ Բարկէնաւելի հանդարտ և զգոյշ փարմանք ունէր և չէր իյնար ոչ ընկերներուն եւ ոչ կենդանիներուն հետ։

ՔՈՐ. ՎԱՐԺ. — Արի. Արիարար (մակրայ չինող մասնիկը) Բար, պէս, օրէն, ովին, գին, ակի, ելն։

ԳԻՏԵԼԻՔ. — Մեկան. Ինչպէս կը չինուի. Նետ. Աղեղ։

ԲԱՐՈՑ. — Բարեսրտութիւն։

31. ՄԵԼԱՆ

Մելանը շատ պիտանի է. զոյնը սովորաբար սեւ, փայլուն է եւ զիմահար հեղուկ։ Կայ նաեւ կարմիր, կապույտ մելան։

Սեւ մելան շինելու համար պէտք է գիւտոր (մաղը), երկաթի ծծմբատ կամ կանաչ արջասպ եւ խէժ։ Գիւտորը կոտրիր վրայ կ'ածի. երբ երկաթը կը լուծուի ծծմբային թթուի մէջ, կը կոչուի երկաթի ծծմբատ։

Հին ժամանակ մելանը կը շինէին ածուխով. ինչպէս կ'ընեն մինչեւ հիմակ Հնդկաստանի մելանը։

32. ՄԿՆԻԿ ՈՒ ԿՐԻԱՑ

Մկնիկ մը՝ թեթեւ, յիմար,
Երբ դէս ու դէն կը գառնար,
Հանկիպի վրայ ճամբուն
Կրիայի մը հէք, նկուն։
—Մ՚հ, կ՚ըսէ այդ քո տուն,
Տխուր զնդան։
Կ՚անիծես դու բնութիւն
Որ քեզ տուաւ այդպէս տուն։
Տե՛ս իմ տուն է ապարան,
Մեծ, շքեղ իմ բնակարան։
Լորենի մկան յայնժամ
Տայ կրիային այս պատասխան.
—Շատ գոհ եմ ես իմ տունէս,
Զի ակն եմ ես։

33. ԾՈՒԼՈՒԹԻՒՆ

Կատարինէ այրի բալի կին մ՚էր։ Ան իր տրգի մ՚ար տրիշ քարպուք մը կը պանուէր, բայց ամէն ամիս իր մօրը տուակ կը իսկէր որ տպլի։

Օր մը նամակ մ'առաւ Կատս բինէ և կանչեց Յովսէփն, որ իր գրասենեակն էր. և ա. նոր ըսաւ.

— Տղաս, խնդրեմ սա նամակը կարդա՛, պատաւ եմ, աչքերս լաւ չեն տեսներ։

Յովսէփ կարմրեցաւ ու կմկմաց.

— Տիկին ես կարդալ չգիտեմ։

— Բայց շատ ատեն կայ որ գրպ. րոց կ'երթաս։

Ծոյլ Յովսէփը գլուխը ծռեց և չը. փսիսած մնաց։

— Ուրեմն, ուրիշ տղայ մը կ'ուզեմ ըսաւ պատաւ կ/նրա։ Գիտե՞ս որ Պօղոսն, որ քու դասընկերդ է կրնայ կարդալ։

— Երթամ կանչեմ, ը. սաւ Յովսէփ, որ վեր և ծոյլ էր, լաւ սիրտ ունէր։ Պօղոս եկաւ և որոշ ու յստակ ձայնով կարդաց նամակը։ Յովսէփ շատ ամօթոտ մնաց և ինքն իրեն ըսաւ. Ես ալ կ'ուզեմ կարդալ։

Երկու սովոր ետք, Յովսէփ ի սենեկան աշխատանոցս ոչ միայն սկսաւ շուտ և լաւ կարդալ, այլ և գրել ու հաշուել։

ՔՆՐ. ՎԱՐԺ. — Բարի-բարեսէր (ուրիշ բարդութիւնք) Գոյական. Բարութիւն. ն ն։ Յովսէփ, յատուկ անուն. Հասարակն. Հաւաքականն ինչ է։ (Կերկնութիւն քերթակ. նական բացատրութեանց)։

ԳԻՏԵԼԻՔ. — Նամակ. Օրագիր. Հանդէս ն ն։

ԲՈՒՐՈՅ. — Աշխատասենեակ։

34. ՈՒՐՈՒԱԿԱՆ

Ես արդուտ եմ, կ'ասէր Կարապետ, իր մօրը բանէ մը չեմ մոռնար և գիշերը մոռ թիւն ամէն տեղ կրնամ պարծիլ։

Բայց Կարապետ մի ծաղրուն էր և պարծենկոտ։ Գիշեր մը քնացած ատեն ը յանկարծ արթնցաւ. կարծեց թէ իր աչքին կ'երեւի պատուհանին մէջ

Ճերմակ կին մը կլոր ու վայլուն գլխով։

Կարապետ լեզուպատառ ելաւ. գրուխը վեր. մանկին տակը ծածկեց և պոռաց.

— Մայրիկ. մայրիկ, հասի՛ր։

Խնդճ մայրն սրտաճմուռնդ վազեց անոր մօտ։

— Մայրիկ բաւ Կարապետ խեղդուկ ձայնով մը, ուրուական մը (վէրի) կայ սենեկիս մէջ. տես այդ վերին։

Մայրիկն սկսաւ քահ քահ խնդալ և ըսաւ. — Լ՛ռ, հապա դու կ՛ըսէիր որ սրտոտ ես. ո՞ւր է անվախութիւնդ, մեզք քեզի, շատ քէդ անդամ կը վախնաս։ Հանէ նայիմ զբրուխդ դուրս, վախկոտ ադա։ Գլի՛ր, եկուր երթանք տուներնիս զեմ կուռնք։

Կարապետ կամացուկ մը գլուխը դուրս հանեց, և ի՞նչ տեսնէ ապէկ։

Փէրի կարծածը վարագոյրն էր, որու վրայ լուսինն իր լոյսը զարկած էր. իսկ ճերմակ փայլուն գլուխն ալ լուսնակն էր՝ որ վարագուրին ետեւէն կ'երեւէր։

— Մայրիկ, ըսաւ Կարապետ, համբուրելով զինք, ուրիշ անգամ մեծ մեծ պիտի չվարդեմ թէ անվախ եմ։

ՔԵՐ. ՎԱՐԺ. — (Կրկնութիւն)

ԳԻՏԵԼԻՔ. — Լուսինն ի՞նչ է, Արե՞ւն։

ԲԱՐՈՅ. — Աւելորդապաշտութիւն. վնասները։

35. ԹՈՒՂԹ

Թուղթը օգտակար է. ի՞նչպէս կը շինուի։ Տե՛ս սա հնահաւաքը որ գետնէն ամէն դոյն հին քրջեր կը ժողվէ։

Ա. յս քրջերն կ'առնէ թղթագործը եւ կը նետէ գլանի մը մէջ, որ ունի սուր սլաքներ։ Գլանը արագ կը դառնայ, կը պատռէ քրջերն և

տեսակ մը զանգուած կ'ընէ։ Ա. յդ զանգուածը բոլորովին ճերմակ է, ինչու որ մէջը կիր դրին։

Ապա թղթագործը կ'առնէ զանգուածը գործիքով մը և բարակ թերթեր կ'ընէ, բոլորը մամուլի տակ կը ճնշէ և անոնց վրայ տեսակ մը խէժ կը սփռէ որ թուղթը չպտղի երբոր վրան գիր գրուի։

Քսանը չորս թերթը մէկ յեռ։ կամ ՊՐՅՈՒ է. քսան տրցակը մէկ ՊՐՈՒ է։

Թղթով կը շինեն օրագիր, գիրք, պատկեր և այլն։ Եթէ թուղթ չըլլար, մենք ալ հին ատենուան պէս պիտի գիր գրէինք կեղեւի, կաշիի և քարի վրայ։

36. ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ

Տասնամեայ մի տղեկ՝ կեցած ափը գետին,
Խաղար կլորիկ քարեր նետելով ի ջրին.
Կը մոռնար վարժատուն, դիտելով ոստուններ,
Որ գետին երեսը կ՚ընէին այդ քարեր։
Մանկիկ մը սիրուն նոյնը ընել կը փորձէ,
Բայց ոտքը կը սահի, հոսանքն է կը տանի։
Խորունկ էր գետակն, մահն անխուսելի։
Ա՛խ, պիտի խղդուի մանկիկն՝ թէ միւսը չհասնի։
Գետ կը նետուի տղեկն մահն աչքը առած,
Երեք անգամ կը սուզի եւ իւր շունչը սպառած,
Կը բռնէ մանկիկն, կ՚ազատէ մահուանէ։
Բայց վրայ քարափին գրոհն ուրախութենէ,
Ծափ կը զարնէ ուժգին, անունդ ի՞նչ է կը գոչէ։
«Անունս, ի՞նչ փոյթ ձեզ, միթէ հո՞ս տի ըսէք,
Որ իմանայ թէ ես թափառ գայլ յեղերք,
Որ ծեծէ զիս սաստիկ. ո՛չ, ո՛չ, ըսաւ տղեկն,
Եւ գլուխն առած՝ շուտ մը դրաւ կծիկն։

ՄԱՍՆ Գ.

1. ԵՐԿԻՐ

Չորս տղայք սեղանի մը բոլորտիքը կեցած են։ Սեղանին վրայ կայ եւ՝ մը։ Իրենց բարի հայրը կը բացատրէ զաւակներուն թէ ի՞նչ է եւ՝։



Երկիրը անշարժ չէ։ Երկու շարժում ունի։ Կը շարժի շարունակ իր վրայ քսան եւ չորս ժամու մէջ՝ որով գիշեր ու ցերեկ կ՚ըլլայ. նոյնպէս կը

թաւալի արեւին բոլորտիքը գրեթէ 395 օրուան մէջ, և տարուան եղանակները կուգան իրարու ետեւէ։

Երկիրը սեղանի պէս տափակ չէ, այլ կլոր գընդակի պէս։ Անոր բոլորտիքը նաւով կը ճամբորդեն մարդիկ։

Շատ շուտ կը շարժի երկիրն։ Շոգեշարժ կառքէ մը հարիւր անգամ աւելի շուտ, թէպէտ մեզի այնպէս կ'երեւի թէ արեւը կը շարժի։ Պատճառը հարցուր վարժապետին։

Դասատուն իւրաքանչիւր դասի վրայ հարցումներ ընելով աշակերտաց, պարտի շարունակել Քերականական և Իրաբանական հրահանգները։

---

3. ԻՆՉՊԷՍ ԿԸ ԲԱԺՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Չորս եղանակ կայ. Գարուն, Ամառ, Աշուն, Ձմեռ։

Գարունը կ'սկսի Մարտ 8ին և կը լմննայ Յունիս 8ին։ Ծաղիկներու եղանակն է այս։

Ամառը կ'սկսի Յունիս 9ին և կը լրանայ Սեպտեմբեր 10ին։ Հունձքի ժամանակ է այս։

Աշունը կ'սկսի Սեպտեմբեր 11 ին և կը լրանայ Դեկտեմբեր 9ին։ Պտղաբաղի և այգեկութի ժամանակ է այս։

Ձմեռը կ'սկսի Սեպտեմբեր 10ին և կը լրանայ Մարտ 7ին։ Անձրեւի, ձիւնի եղանակն է այս։

Ամէն մէկ եղանակ երեք ամիս ունի։ Ինչպէ՞ս։

Ամէն մէկ ամիս 31 կամ 30 օր կը տեւէ։ Միայնակ փետրուար ամիսը 28 օր է։ Չորս տարին մի անգամ 29 օր է. նշանակ տարի։

Տարին 12 ամիս է. ամիսը 4 շաբաթ. շաբաթը 7 օր։ Օրերը կը բաժնուին ժամերու, վայրկեաններու։



ժամացոյցին արտաքին երեսը

ժամացոյցին ներքին մասերը

Մէկ օրը 24 ժամ է. ժամը 60 վայրկեան։ Ժամացոյցէն կ'իմանանք օրուան ժամերը։

3. ԱՐԵՒ

Արեւը հրդեհ մ'է. ինքնին կը վառի և կը լուսաւորէ աշխարհը։ Լուսինն իր լոյսը կ'առնէ արեւէն և մեզի կը ղրկէ, մենք որ երկրի վրայ ենք։ Լուսինն երկրին արբանեակն է։

Երկնից բոլոր հաստատուն մարմիններն արեւներ են, որոնցմէ շատերն արեգակէն աւելի մեծ են, բայց մեզի պզտիկ կ'երեւին, ինչու որ շատ հեռու են։

4. ԵՐԿՐԻ ՏԵՍՔԸ

Երկրին երեսը կան ծովեր, լեռներ, բլուրներ, ժայռեր, դաշտեր, գետեր, լիճեր։ Կան նաեւ հովիտներ, անտառներ, ձորեր։ Եթէ մենք լուսնակին մէջ դտնուէինք, երկիրը մեզի պիտի երեւէր դնդակի մը պէս, մութ և փայլուն բիծերով։ Այդ փայլուն մասերն են ծովերը։

Բայց եթէ երկրին խորը մտնենք, պիտի գըտնենք այլ և այլ հողային նիւթեր, որոնցմէ կը շինուին շաղախ, աղիւս, ապակի և ն։

Կան նաեւ մետաղներ, ինչպէս երկաթ, արծաթ, ոսկի, պղինձ, կապար, քարածուխ, աղուճակ։

5. ԾՈՎ.



Երկրիս երրորդ մասը, ինչպէս ըսինք, ծով է։ Դառն ու աղի է ծովու ջուրը։ Մեծ ծովերը կ'ըսուին Ովկիանոս կամ Ովկեան։

Գետերն ու գետակները կը թափին ծովը։

Ծովեզերք

Ցամաքի ծայրերն որ ծովու վրայ կը նային, կ'ըսուին եղեր։ կամ ափոնք։

Շատ տեղեր ծովէն մաս մը կը մնէ դէպ ի

Կղզի

ցամաք և կը շինէ ծոցեր, ծոցեր, հրուանդաններ, նեղուցներ, եւայլն։

Ովկէանին խորը կը գտնուին լեռներ, բլուրներ, որոց գագաթները կը հասնին ծովուն երես-

սը և կը յօրինեն կղզիներ, խումբեր, աստղակոյտեր։ Նոյնպէս Ծովուն խորը կան հրաբուխներ, այսինքն կրակ ու բոց հանող լեռներ։

6. ԾՈՎՈՒ ՌՍԿԻՐ

Ծովերու վրայ նաւերը կ'երթեւեկեն, ինչպէս և նաւակներ, շոգենաւեր։ Հեռաւոր երկիրներէ



Շոգենաւ

կը ճամբորդեն նաւերով, և շատ անգամ մարդիկ ապրանքներ կը տանին այն երկիրներն ուր պէտք ունին։

Նաւերը կը մտնեն Նաւահանգիստը և վաճառականներն անոնց բերած ապրանքները կը հանեն և կը ծախեն։

Նաւահանգիստ

Նաւահանգիստներու բերանը կը դտնուին ֆարոներ, այսինքն՝ բարձր աշտարակներ որոց դա-

Փարոս

գաթը կը վառի մեծ լապտեր մը և հեռուն կը լուսաւորէ գիշերն որ նաւերը ցամաքին չզարնեն։

Ծովը երկրին պէս ունի իր բերքերը։ Մարդիկ ոչ միայն ձուկ և խեցիներ կ'որսան ծովէն, այլ և

Կէտ ձկան որսորդութիւն

քուսպ, մարգարիտ, կը հանեն, որով գոհարներ կը շինեն։ Կը հանեն նաեւ սպունգ, որ տեսակ մը կենդանի է. կէտեր, որոնց ճարպէն եղ կը շինեն վա-

Բուսաս, Սպունգ, խեցի

ռելու համար։ Կէտին բերնէն կը հանեն կէրոսկը։ Ծովն է որ մեզի կուտայ նաև աղ, որ այնչափ կարեւոր է կերակուրներու համար։

7. ՑՈՒՆԿԵՐ

Շատ հին անտառներ կը գտնուին երկրի վրայ։ Փայտահարը կը կտրէ ծառերը։ Փայտով կըրակ կը վառենք, ածուխ կը շինենք։ Փայտը շատ

Ցորեն.

Դարի.

Եգիպտացորեն.

բաներու համար կը գործածուի, ինչու որ դիմացկուն և հաստատ նիւթ է։

Փայտով կը շինեն մարդիկ տուներ, կարասիներ, նաւեր։

Զանազան տունկեր կան. անդրադառ, ընկոզ, գոռնոզ, խաղայլն, քոռաժայլն, խնկահոտ։ Մարդու սնունդ տուող տունկերն են, ցորենը, գարին, բրինձը, բակլան, ոլոռն, գետնախնձորն ևն.

Բամբակ

Թելոզ տունկերն են վուշ, կանեփ, բամբակ, որով այլ և այլ կտաւներ կը շինեն մարդիկ մանելով և հիւսելով։

Գետնախնձոր. Քրքում. Խաշխաշ Շիկատոկ. Ստեպղին

Գոռնոզ տունկերն են անոնք որոց արմատէն, կեղեւէն, ծաղիկէն կամ պտուղէն ներկ կը հանեն, ինչպէս տարոն, արեւածաղիկ, քրքում ևն.

Իսպայէն կ'ըսուին այն տունկերն որ մեզի կուտան իւղեր. ինչպէս են ձիթապտուղը, խաշխաշը, ևն։

Բոժայէն են այն բոյսերն որ շատ հիւանդութիւններու համար իբրեւ դեղ կը գործածուին, ինչպէս մոլոշ, մեկոն, երիցուկ, ևն։

Մնկահոտ կ'ըսուին այն բոյսերն որ անուշ հոտ ունին և մասնաւորապէս տաք երկիրները կը բուս-

Մանուշակ, Վարդ, Կակաչ

Մխաթոտ

նին, ինչպէս են համեմք, կինամոն, պղպեղ, մեխակ. ծաղկատունկեր, ինչպէս վարդենի, մանուշակ, անանուխ, ևն։

Ի վերջէ՝ կը գտնուին նմանապէս Ռոնոյի տունկեր որ թոյն ունին, ինչպէս են, մոլեխինդ, ակոնիտոն, ևն։

3. ԾԱՂԻԿ

Ի՞նչ հրաշալի բոյսեր են նաեւ ծաղիկները, որ գարնան կը ծաղկին գոյնզգոյն և անուշ բուրումներ ունին։

Պարտէզներու մէջ կը մշակուին վարդը, շահպրակը, շահոքրամն, յակինթը, մանուշակը, յասմիկն։

Հաղարջ

Սալոր

Մորենի

Կազին

Տանձ

Խնձոր

Կեռաս

Ելակ

Մարգերու մէջ կը բուսնին Զատկի ծաղիկը, շուշանն, առուլյտը եւն։

Իսկ դաշտերու մէջ կ'երեւին վայրի կակաչը, այծի տերեւը, ծծմորը, հարսնուկը, եւն։

Անմեղ մանկիկները կը սիրեն ծաղիկները։

Ծաղիկներէն եաքը կուգան պտուղները։ Յեսակ տեսակ պտուղներ կան։ Կորոր, Ընձոր, Հոտոր, Ֆէնեկոր։

Կորոր կ'ըսուին այն պտուղներն որ մսոտ ու ջրոտ են, բայց մէջն ունին խոշոր կոթ մը, ինչպէս են՝ դեղձը, ծիրանը, սալորը, կեռասը։

Թռչուններն պտուղներն ալ ջրոտ են և մսուտ, բայց ներքին կողմն ունին չէ թէ խոշոր կուտ, այլ հատիկներ կամ ընդեր, որ ողորկ պատեանի մը մէջ ամփոփուած են։ Ինչպէս են, խնձորը, տանձը, զրեարը, և այն։

Հոպուներ կ'ըսուին այն պտուղներն որ կակուղ ու կլոր են և ունին շատ մանր հոպիներ, ինչպէս են խաղողը, հաղարջն, ելակն, և այն։

Փեթեկներ պտուղներն ալ են նուշը, ընկոյզը, կաղինը, շագանակը, և այն. ինչու որ կարծը կեղև մ'ունին. իսկ միջուկը կը գտնուի բարակ մաշկեայ պարկի մը մէջ. պտուղը կը չորնայ և ձմրան համար կրնայ երկար ժամանակ պահուիլ։

Ամէն պտղատու ծառերն որ Եւրոպա կը մշակուին ուրիշ երկիրներէ բերուած են։ Պարսկաստանէն՝ դեղձը, Թուրքիայէն՝ ծիրանին, կեռասը, Սիրիայէն՝ սալորը, Ասիայէն՝ թզենին, ընկուզենին, Կրէտէէն՝ սերկեւիլն, և այն։

ԱՌ ԱՇԱԿԵՐՏՍ

Ահա սիրելի տղայքս, հասանք Փոքրիկ ընթերցողին վերջը։ Այս ընթերցանութենէ շատ օգուտ քաղած էք, եթէ ուշի ուշով կարդացած և հասկըցած էք ձեր կարդացածները։

Հիմակ կրթութիւն մը կամ քննութիւն պիտի ընէ վարժապետը, ձեզի այլ և այլ հարցումներ պիտի ուղղէ, և եթէ լաւ պատասխաններ տաք, այն ժամանակ դասարան պիտի փոխէք եւ Երէց ընթերցողը պիտի սկսիք։